

ՈՒԹ ՆՈՐ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ վեց սարկավագների արեղա ձեռնադրվելուց հետո Մայր Տաճարում սպասարկում էին Ճեմարանի ուսանողներ։ Այդ ուսանողները Ճեմարանի վերատեսչին ներկայացրել էին դիմում՝ հոգևոր կոչում ընդունելու համար։ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչը միջնորդություն է հարուցել և խնդրել Նորին Ս. Օծության՝ թույլատրելու սարկավագության աստիճան շնորհել Ճեմարանի յոթ ուսանողների։ Հիշյալ ուսանողները ցուցաբերել են հմտություն եկեղեցական արարողությունների մեջ և աչքի են ընկնում իրենց նվիրվածությամբ և առաքինի վարք ու բարքով։

Նորին Վեհափառությունը բարեհաճեց թույլատրել սարկավագության աստիճան շնորհել Հոգևոր Ճեմարանի յոթ ուսանողի և մի նախկին ուրարակրի։

Ութ սարկավագների ձեռնադրությունը տեղի ունեցավ Մայր Տաճարում նոյեմբերի 27-ին, կիրակի օրը, սուրբ պատարագին։ Ձեռնադրությունը կատարեց պատարագիչ ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Խարտավիլակն էր Տ. Կոմիտաս վարդապետը։ Եպիսկոպոսական պատարագին և ձեռնադրության հանդիսավոր արարողության ներկա էին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները։

Նորընծա սարկավագներն են.

1. Ազատ Արմենակի Սանթուրյան, սնբաստացի, հայրենադարձ Լիբանանից, Ճեմարանի ուսանող.

2. Խորեն Հարությունի Պալյան, սսեցի, հայրենադարձ Սիրիայից, Ճեմարանի ուսանող, ջահընկալ.

3. Հովհաննես Մխիթարի Դանիելյան, Վրացական ՍՍՌ մայրաքաղաք Թբիլիսիից, ջահընկալ, քահանա ձեռնադրվելու է ընթացիկ կրթաշրջանի վերջում.

4. Կարապետ Աբրահամի Բեճլիյան, մարաշցի, հայրենադարձ Լիբանանից, Ճեմարանի ուսանող, ջահընկալ.

5. Սարգիս Արտաշիսի Բեհբուդյան, Ադրբեջանական ՍՍՌ Նուխի քաղաքից, Ճեմարանի ուսանող, ջահընկալ.

6. Գառնիկ Անարոնի Մառուկյան, ադանացի, հայրենադարձ Հունաստանից, Ճեմարանի ուսանող, ջահընկալ.

7. Պետրոս Գառնիկի Բերբերյան, բաղեշցի, հայրենադարձ Եգիպտոսից, Ճեմարանի ուսանող.

8. Գարեգին Տ. Նշանի Տեր-Նշանյան, (Կզըլգյոզյան), չորք-մարզպանցի (Դյորտ-Յոլ—Կիլիկիա), հայրենադարձ Երուսաղեմից։

Պատարագիչ սրբազանը ձեռնադրության արարողությունից հետո նորընծա սարկավագներին կարդաց հետևյալ հայրական հորդորը.

«Սիրելի՛ սարկավագներ։

Դուք այսօր ձեռնադրությամբ արժանացաք սարկավագության աստիճանի։

Որպես Ճեմարանի սաներ և կրթված անձինք, ինքներդ լավ հասկանում եք, թե ի՛նչ ծանր պարտականություն վերցրիք ձեզ վրա։ Անշուշտ գիտեք և այն, որ դուք ձեր մարդկային ուժերով անկարող պիտի լինեք կրել այդ ծանր լուծը և միայն Ս. Հոգու շնորհն է, որ ձեզ ուժ ու եռանդ է տալու՝ կատարելու պարտքի մեծ գիտակցությամբ ժողովրդի հոգևոր հովվությունը։

Ինձ թվում է, որ հենց այդ դիտավորությամբ էլ դուք մտնում եք հայ հոգևորականության շարքերը։ Նրանց հոգևոր կյանքը ձեզ համար նշանաբան և սրբություն սրբոց պետք է լինի։ Հայ Եկեղեցու ավանդությունները, սովորությունը, կենդանի հավատը առ Աստված և ամբողջ նվիրվածությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ կլինեն ձեր զենքը։ Բավական է մի փոքր թերանաք ձեր պարտականությունների մեջ, երկմտություն առաջ գա ձեր կրոնական հայացքների մեջ, դուք նրանց հիշատակը ոտնատակ տված կլինեք։

Մայր Աթոռի նոր սարկավագները

Դուք ձեր կյանքում տեսել եք շատ հոգևորականների, որոնք ուժեղ տպավորություն են թողել ձեզ վրա թե՛ իրենց առաքինի կյանքով, թե՛ հավատով և թե՛ ժողովրդին ծառայելու նվիրվածությամբ։

Դուք ծանոթ եք եկեղեցական պատմության, կարդացել և ուսումնասիրել եք մեր երջանկահիշատակ կաթողիկոսների, եպիսկոպոսների վարդապետների, քահանաների անձնվեր ծառայությունները հայ ազգին և ոգևորվել նրանց կատարած գործերով։

Դուք՞ն ուրախ ու երջանիկ եք, որ արժանացել եք ազնիվ նորընտիր սիրելի Վազգեն Ա. Վեհափառ Կաթողիկոսի ուշադրության, որի հրամանով այսօր արժանացրի ձեզ սարկավագության աստիճանի։

Սարկավագությունը փոքր պաշտոն չէ։ Առաքելական դարում, երբ քրիստոնյաների թիվը շատացավ, առաքյալները չէին կարողանում սպասարկել նորահավատ քրիս-

տոնյաներին, ուստի ընտրեցին յոթը սարկավագներ։ Նրանցից մինը եղավ Ս. Ստեփանոս սարկավագը, որը նահատակվեց քրիստոնեական կրոնի համար։ Նա հիշեց Հիսուսի խաչի վրա կրած տանջանքներն ու արտասանած խոսքերը և ասաց. «Տե՛ր, ների՛ր սրանց, քանի որ չեն իմանում, թե ի՛նչ են անում»։ Այդ պատճառով նա անցավ սրբերի շարքը։ Այդ մեծ նահատակի և առաջին մարտիրոսի հիշատակը տոնում է Քրիստոնեական Եկեղեցին։

Հոգևորականը իր սրբակրոն կյանքով, իր կրոնական կենդանի հավատով թե՛ դուրսը և թե՛ եկեղեցում հոգևորականին վայելուչ կյանքով պիտի օրինակ հանդիսանա իրեն հանձնված հոտին։

Մաղթում եմ առողջություն, հաջողություն ձեր ընտրած նոր ասպարեզի մեջ»։

***

Հավարտ պատարագի նորընծա սարկավագները, իրենց վերատեսչի առաջնորդությամբ, Վեհարանի դահլիճում ներկայացան Ամենայն Հայոց ազգընտիր Հովվապետին և պատկառելի Գերագույն Հոգևոր Խորհրդին։ Ներկա էին նաև միաբանության բոլոր անդամները։

Երբ սարկավագները համբուրում էին ազգընտիր Հայրապետի Ս. Աջը, բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը հակիրճ ուղերձով նրանց որակեց առաջին նվեր՝ ընծայաբերված Նորին Վեհափառության ընտրությունից և օծումից հազիվ երկու ամիս հետո։ Վեհափառ Հայրապետը ժպտաշուրթն հայտնեց, թե ուրախությամբ էր ընդունում Հայաստանյայց Եկեղեցու պայծառության և ուժեղացման ծառայելու կոչում ունեցող այս կենդանի նվերը։ Խոսք առավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ. Առաքել Առաքելյանը, որ նշեց, թե ներկա դարը գիտության դար է, և հորդորեց սարկավագ ուսանողներին զինվել գիտությամբ, լավագույն կերպով ծառայելու Հայաստանյայց Եկեղեցուն ու հայ ժողովրդին և անձնվիրաբար պաշտպանելու հայ ժողովրդի գերագույն շահերը։ Ապա Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանը Նորին Վեհափառության և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին ներկայացրեց շնորհունակ սարկավագներին անուն-ազգանուններով։

Վեհափառ Հայրապետի հրավերով ներկաները մտան Վեհարանի սեղանատունը, որտեղ ճոխ սեղան էր պատրաստված ի պատիվ նորընծա սարկավագների։

Սեղանի շուրջը բաժակաճառեր արտասանեցին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, Տ. Գարեգին ծայրագույն վարդապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյանը, հոգեշնորհ Տ. Հայրիկ և Տ. Վահան աբեղաները, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչը և դասախոսներից պ. Արթուն Հատիտյանը, նորընծա Խորեն սարկավագ Պալյանը և Սարգիս (Սանդրո) սարկավագ Բեհբուդյանը։ Տ. Կոմիտաս վարդապետը մեներգեց «Տէ՛ր, կեցո՛» մաղթերգը, երգվեցին «Էջ Միածին ի Հօրէ» շարականը, «Հայրապետական մաղթանքը» և տերունական աղոթք «Հայր մեր»ը։

Նորին Վեհափառությունը հույս հայտնեց, թե մոտիկ ապագայում Ս. Էջմիածինը որպես փարոս իր լույսը պիտի տարածեր հանուր աշխարհի հայության։

Հայրապետական օրհնությունն ստանալուց հետո ներկաները շնորհակալություն հայտնելով հրաժեշտ տվեցին Ամենայն Հայոց արժանընտիր Հայրապետին։

ՀԱՆԴԻՍԱԿԱՆ